ԶՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Խաչատուր Խաչատրյան[*], *Սերգեյ Եղոյան*[**]

Ահաբեկչության դեմ պայքարը մեր օրերում աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն է ձեռք բերել, ուստի ուսումնասիրություններն այս ոլորտում ավելի քան արդիական են:

Հակաահաբեկչական ռազմավարության մշակման և իրագործման միջոցառումները պետություններում, միջազգային կազմակերպություններում ու դաշինքներում իրականացվում են տարբեր կառույցների համատեղ ուժերով: Դրանց ընթացքում անհրաժեշտություն է առաջանում կիրառել հատուկ զինատեսակներ, տրանսպորտային, կապի և այլ տեխնիկական ու նյութատեխնիկական միջոցներ: Զինված ուժերը, ունենալով մեծաթիվ և արհեստավարժ անձնակազմ, համալրված լինելով մարտական տեխնիկա ու սպառազինություն ունեցող ստորաբաժանումներով, կարող են անփոխարինելի օգնություն ցույց տալ հակաահաբեկչական մասնագիտացված կառույցներին:

Ահաբեկչությունը ծագել և ժամանակի ընթացքում ինտենսիվորեն զարգացել է մարդկային հասարակության պատմական, քաղաքական, տնտեսական, կրոնական զարգացման այն նախադրյալների շնորհիվ, որոնք հող են նախապատրաստել սուր հակասությունների առաջացման համար:

Ահաբեկչությունը (Ա) հակառակորդին վախեցնելու, ահաբեկելու քաղաքականություն է: Այստեղ օգտագործվում են բոլոր հնարավոր միջոցները, ընդհուպ մինչև ֆիզիկական ոչնչացում: Տարբեր ժամանակներում այն

[*] Ռազմական գիտությունների թեկնածու:
[**] Ռազմական իրավունքի փորձագետ:

օգտագործվել է պետությունների, քաղաքական և կրոնական կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անհատների կողմից [1]:

Ահաբեկչությունը պայմանականորեն կարելի է դասակարգել երկու ձևով՝ քաղաքական և պետական:

Քաղաքական ահաբեկչություն (ՔԱ). այստեղ ենթադրվում է այնպիսի գործողությունների կատարում, որոնք ուղղված են պետական քաղաքական և կուսակցական առաջնորդների, հասարակական գործիչների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև այս կամ այն երկրի ենթակառուցվածքի օբյեկտների դեմ՝ իշխանություններից ահաբեկիչներին ձեռնտու քաղաքական, օրենսդրական և այլ որոշումներ ընդունել կորզելու նպատակով: ՔԱ-ն նաև կարող է առանձին վերցված երկրի պետական և հասարակական կարգը փոխելու նպատակ հետապնդել [2]:

ՔԱ-ն, որպես կանոն, կարող է ունենալ աջ, ձախ, ազգային, ռազմատենչ (միլիտոկրատ) և կրոնական տարատեսակներ:

Աջ ահաբեկչության նպատակն է ստեղծել քաղաքական վարչակարգ, որտեղ վերացվում են քաղաքացիական իրավունքները, որոշակի պետությունում հաստատվում է միայն մեկ ազգի, ռասայի կամ սոցիալական խմբի անսահմանափակ իշխանություն՝ ի վնաս մյուսների: Եթե ավելի որոշակիացնենք, աջ ահաբեկչության գաղափարախոսություններն են ռասիզմը և ֆաշիզմը (նեոֆաշիզմը):

Ձախ (կամ հեղափոխական) ահաբեկչության նպատակն է վերափոխել պետության կառավարման կարգը, վերացնել մասնավոր սեփականությունը, արգելել ազատ առևտուրը, վերացնել պետական հարկադրման մարմինները:

Ազգային ահաբեկչության նպատակը տարբեր էթնիկական խմբերի համար անկախության ձեռքբերումն է, այս կամ այն ժողովրդից խլված տարածքների վերադարձը: Իռլանդիայի (Իռլանդական հանրապետական բանակ) պայքարն Անգլիայի դեմ, Կորսիկայի (Կորսիկայի ազատագրության ճակատ) պայքարը Ֆրանսիայի դեմ, բասկերի պայքարն Իսպանիայի դեմ, Շրի Լանկայում Թամիլների (Թամիլ Էլամի ազատագրության վագ-

ներ) պայքարը Հնդկաստանի դեմ որակվում են որպես ազգային ահաբեկչական գործողություններ [3]:

Ռազմահիշխանական (միլիտոկրատական) ահաբեկչության նպատակն է պետության ներսում հաստատել կոշտ ռազմական վարչակարգ, որտեղ գերիշխող դեր կունենան բանակը, հատուկ ծառայությունները և ոստիկանությունը: Դրա գաղափարախոսության հիմնադրույթը վերաբերում է լիովին ռազմականացված հասարակությանը՝ մարդու անձնական և տնտեսական կյանքի խիստ բարձր մոբիլիզացմամբ: Պետությունը, ըստ ռազմահիշխանական ահաբեկիչների, զինվորականների ձեռքում պետք է կենտրոնացնի օրենսդիր, գործադիր և դատական ամբողջ իշխանությունը:

Կրոնական ահաբեկչության նպատակն առանձին պետությունների արմատական վերափոխումն է և այնպիսի աշխարհակարգի հաստատումը, որը պետք է համապատասխանի հասարակության այն խմբերի կրոնական ու մշակութային պատկերացումներին, որոնք դավանում և քարոզում են տվյալ գաղափարախոսությունը [4]: Ներկայում ամենավտանգավոր կրոնական ահաբեկիչներն են համարվում իսլամական կրոնական ծայրահեղականները:

Պետական ահաբեկչություն (ՊԱ). Այս դեպքում ահաբեկչական գործողությունների նախապատրաստմանն ու իրականացմանը մասնակցում են պետությունը, պետական կառույցներն ու դրանց ներկայացուցիչները: Որոշ հետազոտողներ ՊԱ են համարում ցեղասպանությունը, պետության կողմից կազմակերպված զանգվածային սպանություններն ու կոտորածները, որոնց նպատակն է էթնիկական, կրոնական և սոցիալական ամբողջ խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացումը կամ երկրից արտաքսումը: Այս տեսակետից ՊԱ վառ օրինակներ են՝ հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, նացիստական Գերմանիայի կողմից հրեաների ոչնչացումը և այլ հանցագործություններ, որ իրականացվել են համաշխարհային պատմության այս կամ այն փուլում, ավտորիտար և տոտալիտար տարբեր վարչակարգերի կողմից [5]:

Պետական ահաբեկչությունն իր հերթին բաղկացած է ներքաղաքական և միջազգային տարատեսակներից:

Ներքաղաքական ահաբեկչության դեպքում ահաբեկչությունն իրականացվում է մեկ առանձին վերցրած պետության սահմաններում: Այն բնորոշ է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, քրեական և կենցաղային ահաբեկիչներին: Ինչպես նշում է Վ.Ուդիլովը. «Ներքաղաքական ահաբեկչությունը, առանց բացառության, հիմնախնդիր է բոլոր պետությունների համար, քանի որ ապակառուցողական տարրը, որն առկա է ցանկացած երկրի քաղաքական կյանքում, վաղ թե ուշ սկսում է գործել, և քաղաքականության մեջ տեղ գրավելու նրա հայտն առավել կործանիչ, հանդուգն ու մարտաշունչ բնույթ է կրում» [6]:

Միջազգային ահաբեկչության դեպքում դրա ծավալները չեն սահմանափակվում միայն մեկ առանձին երկրի սահմաններով, այլ դուրս գալով մեկ երկրի սահմաններից՝ առաջացնում են միջազգային քաղաքական իրադրության լուրջ լարվածություն և առանձին պետությունների միջև հարաբերությունների վատթարացում և սադրում են քաղաքական ու ռազմական բախումներ: Միջազգային ահաբեկչական կազմակերպության վառ օրինակ է «Ալ-Քաիդան»:

Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող կառույցները և դրանց նպատակները

Հակաահաբեկչական ռազմավարության մշակման և իրագործման միջոցառումները տարբեր պետություններում, միջազգային կազմակերպություններում ու դաշինքներում իրականացնում են հետևյալ կառույցները.

- *ԱՄՆ-ում՝* Ազգային անվտանգության խորհուրդը, Ներքին անվտանգության խորհուրդը, Ազգային հակաահաբեկչական կենտրոնը, Ահաբեկչական ակտիվության վերահսկման կենտրոնը, Ներքին անվտանգության, Արդարադատության և Պաշտպանության նախարարությունները, Կենտրոնական հետախուզական վարչությունը, Դաշնային հետախուզության բյուրոն, Միջազգային միացյալ օպերատիվ խումբը և Ահաբեկչության դեմ պայքարի միացյալ միջգերատեսչական կոորդինացիոն խումբը [7]:

- *Եվրոպական պետություններում՝* Եվրոպոլը, Ահաբեկչության դեմ պայքարի հատուկ հանձնաժողովը, Ահաբեկչության դեմ պայքարի փորձագետների կոմիտեն, Ահաբեկչության դեմ պայքարի համակարգող խորհուրդը [8], հետախուզությունը, հակահետախուզությունը, ահաբեկչության վերլուծության միավորված կենտրոնը, ոստիկանության հատուկ ստորաբաժանումը, ոստիկանության հակաահաբեկչական ստորաբաժանումը, ահաբեկչության ֆինանսավորման կանխման բրիգադը:

Տարածաշրջանային և պետական կառույցներից բացի, իր առանձին մասնագիտացված բաժինն ունի Ինտերպոլը (միջազգային ոստիկանությունը), որը հակաահաբեկչական միջոցառումներ իրականացնում է ամբողջ աշխարհում:

Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող կառույցները տարբեր են, սակայն դրանց հիմնական նպատակները նույնն են՝

1. ահաբեկչական գործունեության նախազգուշացումը, բացահայտումը, կանխումը, խափանումը և դրա հետևանքների նվազեցումը,
2. ահաբեկչությունից անձի, հասարակության և պետության պաշտպանությունը,
3. ահաբեկչական գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտումը և վերացումը[1]:

Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող կառույցների գործունեության արդյունքն ավելի շոշափելի է, երբ նրանք միջազգային պայմանագրերին և ազգային օրենսդրությանը համապատասխան՝ իրենց լիազորությունների սահմաններում համագործակցում և աջակցում են միմյանց՝

1. տեղեկատվություն փոխանակելու,
2. օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հարցումներ կատարելու,

[1] Ահաբեկչության դեմ պայքարի մասին ՀՀ օրենք, 22.03.2005, հոդված 2, 7:

3. ահաբեկչական ակտերը հայտնաբերելու, կանխելու, խափանելու կամ քննելու համար համաձայնեցված միջոցներ մշակելու և ձեռնարկելու ու այդ միջոցների մասին փոխադարձաբար միմյանց տեղեկացնելու,
4. դաշնակից պետության տարածքում հակաահաբեկչական գործողություն իրականացնելու նպատակով իր տարածքում նախապատրաստվող ահաբեկչական ակտերի կանխարգելման և խափանման համար միջոցներ ձեռնարկելու,
5. տեխնոլոգիական և բնապահպանական բարձր վտանգավորության օբյեկտների ֆիզիկական պաշտպանվածության համակարգի վիճակը գնահատելու, այդ համակարգը կատարելագործելու համար միջոցներ մշակելու և իրականացնելու գործում օժանդակություն ցուցաբերելու,
6. նորմատիվ իրավական ակտեր և դրանց կիրառման պրակտիկայի մասին նյութեր փոխանակելու,
7. ահաբեկչական ակտերի խափանման և դրանց հետևանքների դեմ պայքարելու գործում գործնական օգնություն ցուցաբերելու համար, շահագրգիռ կողմերի միջև համաձայնությամբ, հատուկ հակաահաբեկչական կազմավորումներ ուղարկելու,
8. ահաբեկչական ակտերի կանխման և դրանց դեմ պայքարի փորձի փոխանակման, ներառյալ՝ դասընթացների, սեմինարների, խորհրդատվությունների և գիտագործնական համաժողովներ անցկացնելու,
9. աշխատակիցներ պատրաստելու և որակավորումը բարձրացնելու,
10. տեխնոլոգիական և էկոլոգիական բարձր վտանգավորության օբյեկտների ֆիզիկական պաշտպանվածության համակարգերի և միջոցների մշակման ուղղությամբ, կողմերի համաձայնությամբ, համատեղ ֆինանսավորման և գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքներ անցկացնելու,
11. հակաահաբեկչական գործունեություն ապահովելու համար, պայմանագրային հիմունքներով, հատուկ տեխնիկա և սարքավորումներ մատակարարելու միջոցով[1]:

[1] Ահաբեկչության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին պայմանագիր՝ կնքված 1999թ. հունիսի 4-ին, Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2001թ. դեկտեմբերի 28-ից, հոդված 2:

Զինված ուժերի դերն ահաբեկչության դեմ պայքարում

Զինված ուժերը, ունենալով մեծաթիվ և արհեստավարժ անձնակազմ, համալրված լինելով մարտական տեխնիկա ու սպառազինություն ունեցող ստորաբաժանումներով, կարող են անփոխարինելի օգնություն ցույց տալ հակաահաբեկչական մասնագիտացված կառույցներին՝ ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու և արդի մարտահրավերներին դիմակայելու համար:

Փորձը ցույց է տալիս, որ հակաահաբեկչական մասնագիտացված կառույցների հաշվեկշռում գտնվող ուժերը և միջոցները, ելնելով իրենց առջև դրված խնդիրների առանձնահատկություններից, առանձին դեպքերում կարող են չբավարարել հակաահաբեկչական պայքարում իրական հաջողության հասնելու համար, քանի որ ահաբեկչական ուժերը դարձել են ավելի հզոր ու կազմակերպված: Այդ խմբավորումներն իրենց ֆինանսական միջոցներով և զինված անձնակազմի քանակությամբ այնքան զորեղացել են, որ կարող են մրցել նույնիսկ պետական որոշ կառույցների հետ: Դրանց դեմ լայնածավալ հակաահաբեկչական գործողություններին զինված ուժերի ներգրավումն այսօր լայն տարածում ունի: Այսպես. 1994-2001թթ. Ռուսաստանի Դաշնությունում չեչենական ահաբեկիչների դեմ օգտագործված զինված ուժերի զորամիավորումները հնարավորություն տվեցին շոշափելի հաջողությունների հասնել [9], 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո սկսված ԱՄՆ հակաահաբեկչական պայքարում, օգտագործելով զինված ուժերի հատուկ ստորաբաժանումները, հաջողվեց «Ալ-Քաիդա» միջազգային իսլամական ահաբեկչական կազմակերպության դեմ պայքարում արձանագրել դրական տեղաշարժ [10]:

Զինված ուժերի ստորաբաժանումների հակաահաբեկչական գործողությունները կարող են ներառել.

- իրադրության պայմաններից ելնելով հետախուզության անցկացում (տեղեկատվության հավաքում և ժամանակին հասցնում),
- հնարավոր սպառնալիքի գնահատում (ահաբեկչական գործողությունների ուղղվածության և կատարման հնարավորությունը, հնա-

բավոր վնասը և ահաբեկչական գործողության հետևանքների վերացման համար անհրաժեշտ միջոցները),

- ահաբեկչական հարձակման նպատակակետ հանդիսացող առավել կարևոր օբյեկտների պաշտպանության ու պահպանության պլանավորում (հերթապահ ստորաբաժանումների ստեղծում, ֆիզիկական պաշտպանության ակտիվ և պասիվ միջոցների սարքավորում),
- ահաբեկիչների չեզոքացում կամ ոչնչացում,
- զինծառայողների և քաղաքացիական անձանց անվտանգության կազմակերպում:

ԶՈՒ կարևոր գործառույթներից է նաև զանգվածային ոչնչացման, սովորական և այլ զենքերի, մարտական տեխնիկայի ու զինամթերքի՝ դեպի ահաբեկիչները հնարավոր արտահոսքի կանխումը: Այդ նպատակով անհրաժեշտ է անցկացնել զենքերի (հատկապես զանգվածային ոչնչացման կամ դրանց ստեղծման համար բաղադրիչ հանդիսացող նյութերի) պահպանման օբյեկտների տեղակայման, պաշտպանության համակարգի մասին, տեղանքի վերահսկողության, հակահետախուզական աշխատանքների անցկացման, ունեցած սպառազինության և ռազմական տեխնիկայի վիճակի մասին տեղեկատվության պահպանման միջոցառումներ:

ԶՈՒ ստորաբաժանումները, համագործակցելով հակաահաբեկչական մասնագիտացված կառույցների հետ, անօրինական զինված խմբավորումների ուժերի և միջոցների ոչնչացման, ահաբեկչական գործողությունների հետևանքների նվազեցման, իրադրության կայունացման և իշխանություններին ցուցաբերվող օգնության նպատակով կարող են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- պետական սահմանի՝ ահաբեկչական զինված խմբերից պաշտպանություն,
- ապօրինի տարագիրների, ահաբեկչական կազմակերպությունների և հանցագործ համագործակցությունների տեղափոխությունների, զենքերի (այդ թվում՝ զանգվածային ոչնչացման) և թմրանյութերի ան-

օրինական շրջանառության մասին հետախուզական տվյալների հավաքում և կանխում,

- ահաբեկչական գործողությունների հետևանքների վերացմանն ուղղված իշխանության տեղական մարմիններին ցուցաբերվելիք օգնության պլանավորում, իրավապահ մարմինների և այլ տեղական ու պետական կազմավորումների ջանքերի համաձայնեցում,
- ահաբեկչական գործողության հետևանքների գնահատում, փրկարարական և վերականգնողական աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ ուժերի և միջոցների որոշում, անմիջապես դրանց առանձնացում և ուղարկում,
- մասնակցություն պատահարի տեղի պահպանությանն ու շրջափակմանը, դեպի այնտեղ մուտքի սահմանափակում,
- ավերակներում փրկարարական աշխատանքների անցկացում և տուժածների տարհանում:

Ահաբեկչական զինված խմբավորումների դեմ պայքարում ներգրավված զինված ուժերի ստորաբաժանումները, որպես կանոն, կարող են կիրառել ավանդական համազորային մարտի կանոնները՝ օգտագործելով առկա սպառազինության և տեխնիկայի ամբողջ հզորությունը:

Հակաահաբեկչական գործողություններում անօրինական զինված կազմավորումների դեմ պայքարի մարտավարության առավել տարածված ձևը շրջապատումն է, որը կարող է իրականացվել ինչպես մեծ, այնպես էլ փոքր տարածքներում՝ ահաբեկիչների տեղակայման շրջանը բացահայտելու, նրանց հեռանալու հնարավոր ուղիները փակելու, ինչպես նաև օգնական ուժերի աջակցությունը կանխելու նպատակով:

Հակաահաբեկչական գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում օգտագործել գերճշգրիտ զենքեր (օրինակ, գերճշգրիտ հրթիռահրետանային համակարգեր), որոնցով սպառազինված են միայն զինված ուժերի ստորաբաժանումները [11]:

Անօրինական զինված խմբավորումների կայանների բացահայտման, հեռակառավարվող զենքերի օգտագործման կանխման, կայանների ռադիոէլեկտրոնային ճնշման և սեփական կայանների աշխատանքի ապահովման նպատակով կարող են կիրառվել ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ, որոնք ավանդաբար գտնվում են ԶՈՒ ռադիոէլեկտրոնային պայքարի ստորաբաժանումների հաշվեկշռում (ռադիոլոկացիոն, ռադիոտեխնիկական և այլ կայաններ):

Հակաահաբեկչական գործողություններ իրականացնող ստորաբաժանումներին օդային աջակցություն ցուցաբերելու համար կարող է առաջանալ անհրաժեշտություն՝ կիրառելու ԶՈՒ ՀՕՊ և ավիացիայի ստորաբաժանումները (ինքնաթիռներ, ուղղաթիռներ և անօդաչու թռչող սարքեր):

Ահաբեկչական զինված խմբավորումների դեմ ԶՈՒ ստորաբաժանումների և հակաահաբեկչական կառույցների մարտական գործողությունների ապահովման նպատակով, որպես կանոն, կարող են ընդգրկվել նաև ինժեներական, քիմիական և մարտական ապահովման այլ ստորաբաժանումներ [12]:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գործողությունների առանձնահատկություններն ահաբեկչության դեմ պայքարում

Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչական գործողությունների վտանգն առկա է: Դրանք կարող են իրականացվել թե՛ առանձին պետությունների և թե՛ միջազգային ահաբեկչական կազմակերպությունների կողմից:

Արցախյան պատերազմի փորձը ցույց տվեց, որ ադրբեջանական բանակի զինվորներից բացի, իբրև կամավորներ, կռվում էին նաև արմատական իսլամական ծայրահեղական հոսանքների գրոհայինները:

Ադրբեջանը, համագործակցելով հայտնի իսլամական ահաբեկչական կազմակերպությունների հետ, իր ռազմաքաղաքական նպատակներն իրականացնելու համար մարտական գործողությունները կարող է շարունակել դիվերսիոն խմբավորումների միջոցով, որոնք, ուղղված լինելով խաղաղ բնակչության և քաղաքացիական կենսապահովման օբյեկտների դեմ՝ առանձին դեպքերում ահաբեկչական գործողությունների տեսք են ստանում:

Ստեփանակերտի օդանավակայանի և քաղաքացիական ինքնաթիռների վերաբերյալ վերջերս լրատվական միջոցներով տարածված Ադրբեջանի պաշտոնական սպառնալիքները միջազգային հանրության կողմից որակվեցին որպես ահաբեկչական հայտարարություն [13]:

Հայաստանն ազգային և միջազգային անվտանգության ապահովման միջազգային պարտավորությունների շրջանակներում խաղաղապահ առաքելություններ է իրականացնում Կոսովոյում (հունական զորախմբի կազմում) և Աֆղանստանում (գերմանական զորախմբի կազմում): Քիչ չեն դեպքերը, երբ խաղաղապահ առաքելություն իրականացվող պետություններում գործող ահաբեկչական զինված կազմավորումներն օտար պետությունների զինված ներկայության դեմ իրենց դժգոհությունն արտահայտում են տվյալ պետություններում ահաբեկչական գործողություններ իրականացնելով:

Մեր երկրում ահաբեկչության դեմ պայքարն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինները՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնում են՝

1. ՀՀ ազգային անվտանգության,
2. ՀՀ ոստիկանության,
3. ՀՀ պաշտպանության հանրապետական գործադիր մարմինները[1]:

Ահաբեկչության դեմ պայքարին օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաև գործադիր իշխանության հանրապետական մյուս մարմինները (ՀՀ արտակարգ իրավիճակների, կրթության և գիտության, երիտասարդության և սպորտի հանրապետական գործադիր մարմինները և այլն):

Ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետությունը միջազգային պայմանագրերի հիման վրա համագործակցում է այլ պետությունների, ինչպես նաև ահաբեկչության դեմ պայքար իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ:

[1] Ահաբեկչության դեմ պայքարի մասին ՀՀ օրենք, 22.03.2005, հոդված 2, 7:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, հանդիսանալով երկրի խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու գլխավոր երաշխիքը, համագործակցելով հակաահաբեկչական մասնագիտացված կառույցների հետ, ի զորու են համակարգված, նպատակաուղղված և լայնածավալ հակաահաբեկչական գործողություններ իրականացնել:

Եզրակացություն

Պետությունների անվտանգության ապահովումը և միջազգային ահաբեկչության դեմ պայքարը չեն կարող իրականացվել միայն ազգային մակարդակով, այլ պահանջում են միջազգային կազմակերպությունների ու դաշինքների համատեղ գործունեություններ: Ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների ու դաշինքների ջանքերի կենտրոնացումը հնարավորություն կտա կենտրոնացնել համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց աշխատանքը՝ միջազգային ահաբեկչության դեմ միասնական քաղաքականություն մշակելու և վարելու համար:

Աշխարհի բոլոր և հատկապես այն պետություններում, որտեղ անզիջում պայքար է տարվում ահաբեկչության դեմ, շեշտը նախնառաջ դրվում է ուժային բաղադրիչի վրա, այսինքն՝ իրականացվում են զինված ուժերի, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների կոշտ գործողություններ, ռազմավարական նշանակության պետական, ռազմական, տնտեսական ու այլ օբյեկտների անվտանգության պահպանմանն ուղղված միջոցառումների խստացում:

Ժամանակակից ահաբեկչության կողմից առանձին պետություններին և միջազգային հանրությանն առաջադրվող վտանգն այնպիսին է, որ առանց զինված ուժերի ստորաբաժանումների աջակցության դժվար կլինի արդյունավետորեն հակազդել դրանց:

Հոկտեմբեր, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Большой юридический словарь, 3-е изд., доп. и перераб. /Под ред. проф. А.Сухарева, М.: ИНФРА-М, 2007, VI.
2. *Զաքարյան Ս.,* «Ահաբեկչության գիտական դասակարգման շուրջ, «21-րդ ԴԱՐ», թիվ 2(8), 2005թ., էջ 102:
3. Энциклопедия «Всемирная история» в 10 томах, под ред. Ю.Францева, М., 1955-1965.
4. *Ирвин Т.,* Политика и религия, Петрозаводск, 1997, с. 36.
5. *Антонян Ю.,* Терроризм - криминалогическое и психологическое исследование, М., 1998, с. 84.
6. *Удилов В.,* «Кое-что о терроризме», М., 1998, с. 29.
7. *Дэвис Л., Тревертон Г., Биман Д., Дэйли С., Розенау В.,* доклад "Координация войны с терроризмом", март 2004, с. 461- 465, корпорация RAND.
8. Европейская система предотвращения терактов, Борьба с терроризмом: деятельность Совета Европы.
9. Реформа системы борьбы с терроризмом в республиках Северного Кавказа, Московские Новости, 4.02.05, с. 9, ФСБ до террора не опускается.
10. Акт патриота США 2001 года.
11. *Хачатрян Х.,* «Подготовка первой оборонительной операции ОТО коалиционного состава», приложение 35, с. 239. М., ВАГШ, 2009.
12. ՀՀ ՊՆ մարտական կանոնադրություն, մաս II, Եր. 19992., էջ 192-217:
13. http://warsonline.info/nagorniy-karabach/azerbaydzhan-trebuet-vvesti-bespoletnu-zonu-nad-nagornim-karabachom.html

ПОДРАЗДЕЛЕНИЯ ВС И БОРЬБА ПРОТИВ ТЕРРОРИЗМА

Хачатур Хачатрян, Сергей Егоян

Резюме

В ходе антитеррористических действий возникает необходимость применения особых видов оружия, средств связи, транспортных, технических и материально-технических средств. ВС, имея многочисленный и профессиональный состав, будучи укомплектованными подразделениями, имеющими боевую технику и вооружение, могут оказать незаменимую помощь специализированным антитеррористическим структурам.

В РА есть опасность террористических действий. Они могут осуществляться как со стороны отдельных государств, так и со стороны международных террористических организаций. Речь, в частности, об Азербайджане, способном ради осуществления своих военно-политических целей продолжить боевые действия с помощью диверсионных группировок, используя свое сотрудничество с исламскими террористическими организациями. Недавние официальные угрозы Азербайджана относительно аэропорта Степанакерта и гражданских самолетов были восприняты международным сообществом как террористическое заявление.

ВС РА, являясь главным гарантом обеспечения мира и безопасности страны, сотрудничая с антитерростическими специализированными сруктурами, в состоянии осуществить систематизированные целенаправленные и широкомасштабные антитеррористические действия.